Ուղղությունը. Տնտեսագիտություն, բակալավրիատ, առկա ուսուցում

Առարկա. Б1.В27. Աշխատանքի տնտեսագիտություն

Անոտացիա

Աշխատատարությունը՝ *4 կրեդիտ, 144 ակադեմիական ժամ*

Քննություն

Համառոտ նկարագրություն. Շուկայական տնտեսության պայմաններում աշխատողների աշխատանքը շարունակում է մնալ հանրային հարստության գլխավոր աղբյուրը, արտադրության գլխավոր մասը, տնտեսական աճի գլխավոր գործոնը, արդատրության արդյունավետության բարձրացման գլխավոր միջոցը:

Մինչդեռ շուկայական հարաբերությունների պայմաններում աշխատանքի կառավարումը դառնում է ավելի բարդ ու պատասխանատու գործ: Մի կողմից դա պահանջում է աշխատանքի կառավարման ոլորտում ավելի բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստում, և մյուս կողմից, էապես բարձրանում է որակավորված կառավարչի հնարավորությունները՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման և կազմակերպության աշխատանքային հաջողությունների մեծացման գործում:

Դասընթացը նպատակաուղղված է արտադրության արդյունավետության բարձրացման ուղիների ուսումնասիրությանը՝ աշխատանքի ռացիոնալ կառավարման միջոցով:

Դասընթացն ուսումնասիրում է նաև զբաղվածության հիմնական ձևերի և աշխատանքի շուկայի կարգավորման մեթոդները, բնակչության եկամուտների ձևավորման աղբյուրները, աշխատանքի արտադրողականության բարձրացման գործոնները և ռեզերվները ու դրանց չափման մեթոդները: Ուսումնասիրվում են աշխատավարձի կազմակերպման տարրերը, հատուկ ուշադրություն է դարձվում աշխատանքի նորմավորմանը, տարիֆային ցանցերի կառուցմանը, աշխատանքի վարձատրության ձևերի ճիշտ ընտրությանը, ինչպես նաև կազմակերպության անձնակազմի թվաքանակի հաշվարկման մեթոդները:

Կապը ուսումնական պլանի այլ առարկաների հետ. Դասընթացը սերտորեն կապված է «Տնտեսագիտություն» դասընթացի հետևյալ առարկաների հետ՝ «Միկրոտնտեսագիտություն», «Մակրոտնտեսագիտություն» և այլն: